

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

ՀՀ-ՈՒՄԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում դատարանների անկախության ու ինքնուրույնության հարցի ուսումնասիրությանը: Ուսումնասիրությունը կատարվել է՝ հիմք ընդունելով 2015 թվականին երկրում տեղի ունեցած Սահմանադրական փոփոխություններն ու դատարանների անկախության ապահովմանը միտված քայլերը: Հոդվածի մեջ առանձնակի շեշտադրվում են դատարանների անկախության վերաբերյալ առկա միջազգային չափանիշներն ու մոտեցումները՝ Հայաստանի Հանրապետությունում դատարանների անկախության ապահովման հիմքերի հետ համեմատական վերլուծության մեջ: Հոդվածում ուսումնասիրության առարկա հանդիսացող խնդիրը դիտարկվում է ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականում: Որպես արդյունք, հոդվածը երևան է հանում երկրում հարցի վերաբերյալ ինչպես առկա ռիսկերը, այնպես էլ դրական զարգացումները:

Հիմնարար- Դատական իշխանություն, անկախության երաշխիքներ, օրենսդրություն, ՀՀ Սահմանադրություն, միջազգային չափանիշներ, տեսական երաշխիքներ, գործնական կիրառելիություն:

Դատական իշխանության անկախությունը յուրաքանչյուր իրավական պետության հիմնաքարերից և ժողովրդավարական հասարակություն հաստատելու կարևոր նախապայմաններից է: Ինչով պայմանավորված՝ դատարանների անկախության հարցի ուսումնասիրությունը գրավում է ոլորտի մասնագետների և արդարադատության հետ առնչվող յուրաքանչյուր անձի հետաքրքրությունը:

Ժամանակակից սահմանադրական համակարգերում դատական իշխանության անկախության սկզբունքը հենվում է իշխանությունների բաժանման տեսության վրա, համաձայն որի՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները կազմում են կառավարման համակարգի երեք առանձին ճյուղերը, որոնք փոխադարձ զսպիչների և հակակշիռների համակարգ ստեղծելով, միտված են կանխել իշխանության չարաշահումները:

Որպես արդյունք՝ օրենսդիր և գործադիր իշխանություններից դատական իշխանության անկախությունը երաշխավորում է տվյալ միջավայրում իրավունքի գերակայության հիմնադրումն ու ամրապնդումը, ինչպես նաև՝ անհատի և նրա իրավունքների պաշտպանությունը:

Իգուր չէ, որ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային, տարածաշրջանային և ըստ այդմ նաև ներպետական իրավական բոլոր կարգավորումները նախատեսում են անձի՝ անկախ ու անաչառ դատարանի կողմից արդարացի դատաքնության իրավունքը, ինչի ապահովման երաշխիքը հանդիսանում են տվյալ երկրում տեսականորեն և պրակտիկայում անկախ գործող դատարանները:

Ուսումնասիրվող հարցին առնչվող առաջին և հիմնական իրավական փաստաթղթերից մեկը

թերևս կարելի է համարել 1985 թվականին Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից ընդունված Դատական իշխանության Անկախության սկզբունքները, որոնք համարվում են միջազգայնորեն ընդունված և հիմնարար ու երկետային դեր ունեցող կանոններ՝ ՄԱԿ-ի անդամ երկրների օրենսդրությունների և հետագայում ընդունված մնացած իրավական փաստաթղթերի համար:

Դատարանների անկախության հարցը առանձնակի ուշադրության է արժանացել և շարունակում է արժանանալ Եվրոպայի խորհրդի շրջանակներում առկա մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կողմից, որոնց համար սակայն, որպես հիմնադիր ուղեցույց փաստաթուղթ հանդես են եկել վերը նշված սկզբունքները:

Այսպես, Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանը սահմանել է, որ. «Որպեսզի մարմինը, մասնավորապես՝ դատարանը, անկախ համարվի, անհրաժեշտ է ստուգել, թե ինչ եղանակով և ընթացակարգով են դատավորները նշանակվում, պաշտոնավարման ինչ ժամկետներ են նախատեսված, ինչպիսի երաշխիքներ կան արտաքին ճնշումներից պաշտպանելու համար և արդյո՞ք այդ մարմինը անկախ է հանդես գալիս, թե ոչ»: Ավելին, դատարանի և դատավորների անկախությունը պահանջում է, որ դատավորները չունենան կանխակալ մոտեցում կամ կարծիք վեճի կողմերից որևէ մեկի նկատմամբ՝ անձնական կամ նախկինում ունեցած կապերի պատճառով:

Հարցի կապակցությամբ առանձնակի ուշադրություն են գրավում Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի մոտեցումները (այսուհետ՝ Վենետիկյան հանձնաժողով):

www.journal.lawinstitute.am

Այսպես, Վենետիկյան հանձնաժողովը բազմիցս՝ ինչպես առանձին երկրների վերաբերյալ, այնպես էլ որպես ընդհանուր ստանդարտի սահմանում, անդրադարձել է դատական իշխանության անկախության հարցին:

Ըստ հանձնաժողովի, դատական իշխանության անկախությունը հանդես է գալիս օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրիչներով: Օբյեկտիվ բաղադրիչը դատական իշխանության անբաժանելի որակն է (indispensable quality), սուբյեկտիվ բաղադրիչը վերաբերում է անկախ դատավորի կողմից անձի իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցի որոշմանը:

Վենետիկյան հանձնաժողովի կողմից հաստատված մոտեցման համաձայն՝ դատական իշխանության անկախությունը բաժանվում է երկու տեսակի՝ ինստիտուցիոնալ և անհատական: Ինստիտուցիոնալ անկախությունը վերաբերում է երկրի ներսում իշխանությունների բաժանմանն ու օրենսդիր և գործադիր մարմինների ճնշումներից դատարանների ազատ գործելուն: Անհատական անկախությունը վերաբերում է առանձին դատավորների կողմից ճնշումների բացակայությամբ գործերի քննությանն ու որոշումների կայացմանը:

Դատական իշխանության անկախությունը սահմանվում է նաև անկախության արտաքին և ներքին տեսակներով: Արտաքին և ներքին անկախության ապահովման չափանիշները, ընդհանուր առմամբ, հանգում են հետևյալին:

- Դատական իշխանության հիմնական սկզբունքները պետք է ամրագրում ստանան Սահմանադրության կամ համանման ուժ ունեցող իրավական փաստաթղթի մեջ: Այդ սկզբունքները ընդգրկում են դատական իշխանության՝ իշխանության այլ ճյուղերից անկախության հարցը, միայն օրենքին դատավորների ենթակայության հարցը, դատավորների տարբերակումը միայն, ըստ նրանց իրականացրած գործառնությունների և այլն:

- Դատավորների նշանակման և առաջադացման վերաբերյալ բոլոր հարցերը պետք է նախատեսվեն օրենքով և հիմնվեն օբյեկտիվ չափանիշների վրա:

- Դատավորների կարգավիճակի հետ անհամատեղելի սկզբունքները դատարանների անկախության ապահովման էական տարրերից են:

- Դատական իշխանության անկախության երաշխավորման կարևոր պայմաններից է անկախ դատական խորհրդի հիմնումը, որը դատավորների նշանակման և պաշտոնական առաջադացման հարցում որոշիչ դեր ունի: Այս առումով Վենետիկյան հանձնաժողովը, ընդունելով հանդերձ գոյություն ունեցող տարբեր դատաիրավական համակարգերը, միևնույն ժամանակ խորհուրդ է տալիս հիմնադրել նման խորհուրդներ, որոնց կազմը ցանկալի է լինի բազմաոլորտ, սակայն բաղկացած լինի

մեծամասամբ դատավորներից:

- Դատավորները, ընդհանուր առմամբ, պետք է պաշտոնավարեն մինչև թոշակի անցնելը, փորձաշրջան նախատեսելը, անկախության տեսանկյունից կարող է խնդրահարույց լինել:

- Կարգապահական վարույթներում որոշիչ դեր պետք է ունենան դատական խորհուրդները կամ կարգապահական դատարանները:

- Դատավորների համար պետք է նախատեսվի վարձատրության այնպիսի չափ, որը համահունչ է նրանց կարգավիճակին, արժանապատվությանն ու իրականացվող գործառնություններին:

- Դատավորներին հատկացվող բոնուսները և ոչ պաշտոնական առավելություններն ու օգուտները պետք է բացառվեն:

- Դատական իշխանության բյուջեի հատկացման հարցը պետք է լուծվի վերջինիս անկախության ապահովման մոտեցմամբ, ըստ այդմ, դատական իշխանությունը պետք է հնարավորություն ունենա իր կարծիքը հայտնել ներկայացված բյուջեի վերաբերյալ:

- Դատավորները պետք է օժտված լինեն միայն գործառնական անձեռնմխելիությամբ:

- Դատավորները չպետք է իրենց դնեն այնպիսի իրավիճակներում, որի պայմաններում վերջիններիս անկախությունը հարցականի տակ կդրվի: Նման իրավիճակների բացառման համար նախատեսվում են դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքների կատարման արգելք:

- Դատական որոշումները դատական վերանայման ընթացակարգից բացի այլ եղանակով վերանայման չեն կարող ենթարկվել:

- Դատական իշխանության նկատմամբ արտաքին ճնշումները բացառելու համար պրակտիկայում պետք է ապահովվել «sub judice» սկզբունքը, ինչը նշանակում է, որ պետք է հավասարակշռություն մտցնել դատական գործընթացների պաշտպանության և հանրային կարևորության հարցերի հրապարակայնության և դրանց շուրջ ազատ քննարկումների միջև:

- Դատական իշխանության ներքին անկախությունը նշանակում է, որ յուրաքանչյուր դատավորի անհատական անկախությունը դատական գործառնություններ իրականացնելիս բացառում է դատավորների ենթակայությունը միմյանց հետ հարաբերություններում:

- Դատական գործերի բաշխումը դատավորների միջև պետք է իրականացվի օբյեկտիվ և քափանցիկ չափանիշների հիման վրա: Այդ չափանիշները պետք է սահմանված լինեն օրենքով:

Անդրադառնալով ՀՀ-ում դատական իշխանության անկախության հարցին՝ նախ հարկ է վերհիշել, որ մեր երկրում դատական իշխանության բարեփոխումների առաջին ալիքը սկսվել է 1995թ. Սահ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մանադրության ընդունմամբ, երկրորդ ալիքի սկզբնավորումը՝ 2005թ. Սահմանադրական փոփոխություններով, իսկ երրորդը՝ 2015թ. Սահմանադրական փոփոխություններով:

Չնայած իրականացված և իրականացվող բարեփոխումներին՝ առաջին փուլից մինչ օրս ՀՀ-ում շարունակում է արդիական մնալ դատական իշխանության և դատավորների անկախության հարցը, ինչը բազմիցս բարձրացվել է ինչպես ներպետական մակարդակում, այնպես էլ միջազգային կառույցների կողմից:

Հատկանշական է, որ իրականացված սահմանադրական բարեփոխումների առանցքային նպատակներից է մշտապես դիտարկվել իրավական պետության ձևավորման գործում էական դերակատարում ունեցող իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացումը: Այս առումով իր ուրույն տեղն է գրավում իշխանության այլ ճյուղերի նկատմամբ հակակշռող կամ կայունացնող գործառույթ իրականացնող դատական իշխանությունը: Ըստ այդմ, 2015 թվականի Սահմանադրական բարեփոխումների արդյունքում, ի թիվս այլ փոփոխությունների, էապես փոխվել են դատավորի կարգավիճակը, դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները, դատավորների ընտրության և նշանակման կարգը, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կարգավիճակը:

Այսպես, դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելու նպատակով սահմանադրական մակարդակով ամրագրվել են Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ պետական մարմնի կազմը և Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կարգը, վերջինիս լիազորությունները: Հստակ ամրագրում են ստացել դատավորի կարգավիճակի օրենսդրական երաշխիքները, դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները, նրանց ընտրության և նշանակման կարգը: Այս և այլ կարևոր հարցեր հնարավորինս համապատասխանեցված են Վեներտիկյան հանձնաժողովի կողմից ընդունված՝ անկախ դատական խորհուրդների վերաբերյալ վերը ներկայացված սկզբունքներին:

Դատավորի կարգավիճակին նվիրված Հայաստանի Հանրապետության սահմանադրության 164-րդ հոդվածում ամրագրվել է նոր իրավակարգավորում այն մասին, որ դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ՝ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ: Ինչ վերաբերում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցին, ապա այն լուծվում է Բարձրագույն դատական խորհրդի կողմից: Ընդ որում, դատավորի նկատմամբ կար-

գապահական վարույթ հարուցելու իրավունք ունեն՝

- 1) ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը,
- 2) արդարադատության նախարարը:

Մտահոգություն այս հարցում կարող է առաջանալ դատավորին պատասխանատվության ենթարկելու հարցում գործադիր իշխանության, այն է՝ արդարադատության նախարարի ներգրավումը, ինչը հնարավոր է պրակտիկայում չարաշահումների տեղիք տա և դիտվի որպես միջամտություն դատական իշխանության իրականացմանը: Ավելին, ինչպես ցույց է տալիս փորձը, դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների հարուցումը կրում է ձևական բնույթ: Մինչդեռ երկրում կարգապահական պատասխանատվության ինստիտուտը արդյունավետ կիրառելու մեխանիզմները ինչպես տեսականում, այնպես էլ գործնականում դեռևս բացակայում են:

Անդրադառնալով պրակտիկային՝ պետք է նշել, որ ինչպես ցույց է տվել դատավորների աշխատանքային փորձը, օրենքով ամրագրում ստացած այս և մի շարք այլ երաշխիքները բավարար չեն պրակտիկայում իրական անկախություն և գործառույթների արդյունավետ իրականացում ապահովելու համար, ինչով պայմանավորված՝ պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ դատավորները գործերը քննում են կաշկանդվածության և արտաքին ճնշումների ներքո, ինչը խաթարում է արդարադատության իրականացումը:

Սահմանադրությամբ հստակ ամրագրում են ստացել նաև դատավորի կարգավիճակի հետ անհամատեղելի համարվող գործառույթների արգելքը, դատավորների լիազորությունները դադարելու հիմքերը, ինչպես նաև՝ բավարար ֆինանսական վարձատրության հարցը:

Դատական իշխանության վերաբերյալ ներկայացված այս և մի շարք այլ հարցեր մանրամասն կարգավորում են ստացել Դատական օրենսգրքով, ինչը ներկայումս գտնվում է բարեփոխումների փուլում:

Կարող ենք փաստել, որ Սահմանադրական և ընթացող Դատական օրենսգրքի փոփոխություններով կարծես թե սահմանվում են բավարար երաշխիքներ դատական իշխանության անկախության խնդիրները լուծելու համար: Մակայն, փոփոխությունների և սահմանվող երաշխիքների մանրամասն ուսումնասիրությունը և երկրի իրավական պրակտիկան ցույց է տալիս, որ սույն երաշխիքների տեսական ամրագրումը բավարար չէ պրակտիկայում արդյունավետ կիրառում ապահովելու համար: ՀՀ-ում դատարանների և դատավորների անկախության խնդիրը կապված չէ սույն օրենսդրական կարգավորումների և տեսական ամրագրումների հետ: Խնդիրը ավելի շատ կապված է եղել և

շարունակում է կապված մնալ այդ երաշխիքների պրակտիկ կիրառելիության և հաճախ նաև քաղաքական կամքի բացակայության հետ: Նման պայմաններում անկախության ապահովումը պահանջում է ոչ միայն օրենսդրության փոփոխություն, այլ

նաև նոր իրավական մշակույթի որդեգրում, և պրակտիկայում՝ այդ երաշխիքների կիրառումը ապահովող մեխանիզմներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. International Covenant on Civil and Political Rights, article 14.1, European Convention on Human Rights and Fundamental Freedoms, article 6, African Charter on Human and Peoples' Rights, article 7.1, American Convention on Human Rights, article 8.1 etc.
2. UN General Assembly resolutions 40/32 of 29 November 1985 and 40/146 of 13 December 1985.
3. ECHR cases: Bryan v. the United Kingdom, N 19178/91, 1995, Delcourt v. Belgium, N 2689/65, 1970.
4. European Commission for Democracy through Law, Compilation of Venice Commission opinions, reports and studies on constitutional justice, 1 July 2015.
5. Venice Commission, Report on the Independence of the Judicial System, 12-13 March 2010.
6. <https://rm.coe.int/16806c2bd8>.
7. <https://rm.coe.int/1680471d82>.
8. ՀՀ Սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով:

Ասմիկ Արությունյան

Соискатель Академии государственного управления РА

РЕЗИОМЕ

Конституционные гарантии независимости судей в свете международных стандартов

Данная статья посвящена изучению независимости и автономии судов в Республике Армения. Исследование проводилось на основе конституционных поправок, которые были проведены в 2015 году, и шагов по обеспечению независимости судов. В статье подчеркиваются существующие международные стандарты и подходы к независимости судов в аналитическом анализе оснований для независимости судов в Республике Армения. В статье предмет исследования рассматривается как теоретически, так и практически. В результате в статье раскрываются как существующие риски, так и позитивные изменения в стране.

Ключевые слова: судебная власть, гарантии независимости, законодательство, Конституция Республики Армения, международные стандарты, теоретические гарантии, практическая применимость.

Hasmik Harutyunyan

Applicant of the Public Administration Academy of the Republic of Armenia

SUMMARY

The Constitutional Guarantees of Independence of Judiciary in Armenia in Light of International Standards

This article is dedicated to the study of independence and autonomy of courts in the Republic of Armenia. The study has been done based on the Constitutional changes of 2015 and on the measures taken to ensure the independence of the courts. Particular attention is paid to the international standards and developments on courts' independence which are presented in a comparative analysis with the existing guarantees in Armenia. The subject of the study in the article is presented both theoretically and practically. As a conclusion the article reveals both the existing risks and positive developments on the topic in the country.

Keywords: Judiciary, guarantees of independence, legislation, Costitution of Armenia, international standards, theoretical guarantees, practical implementation.